# ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Հարգելի՛ շահառու,**

Հայտնում ենք, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեում սույն թվականի դեկտեմբերի 17-ից 18-ը տեղի կունենա Աղոնցի փողոցի N 6 հասցեում կառուցված բազմաբնակարան շենքային համալիրի ավտոկայանատեղիների բաշխման համար իրականացվող վիճակահանությունը:

Անհրաժեշտ է ներկայանալ **ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 4րդ հարկ, N 453 սենյակ՝ բնակարանային ծրագրերի բաժին**: Ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, իսկ լիազորված անձի դեպքում՝ նաև լիազորագրով (կցվում է): Վիճակահանությունը կիրականացվի ըստ մասնաշենքերի:

2019 թվականի դեկտեմբերի 17-ին տեղի կունենա հետևյալ մասնաշենքերի ավտոկայանատեղիների վիճակահանությունը՝

- 1-ին մասնաշենք՝ ժամը 10:00
- 2-րդ մասնաշենք՝ ժամը 11:30
- 3-րդ մասնաշենք՝ ժամը 14:00

2019 թվականի դեկտեմբերի 18-ին տեղի կունենա հետևյալ մասնաշենքերի ավտոկայանատեղիների վիճակահանությունը՝

- 4-րդ մասնաշենք՝ ժամը 10:00
- 5-րդ մասնաշենք՝ ժամը 11:30
- 6-րդ մասնաշենք՝ ժամը 14:00

Ձեր ներկայությունը չապահովելու դեպքում ավտոկայանատեղիի տեղադիրքը կորոշվի վիճակահանությունից հետո թափուր մնացած կայանատեղիների բաշխմամբ՝ պատահականության սկզբունքով:

Միաժամանակ, խնդրում եմ կից ներկայացվող Հավելվածով ստուգել Ձեր բնակարանի/ավտոկայանտեղիի տեղադիրքի վերաբերյալ տեղեկատվությունը և ներակայանալ համապատասխան օրը:

**Հարգանքով՝**

**ՀՀ քաղաքաշինության կոմիտե**
**Բնակարանային ծրագրերի բաժին**